



## Վահրամ ՀՈՎՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

2003 թ. ավարտել է ԵՊՀ միջ-ազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի բակալավրիատը, իսկ 2005 թ.՝ մագիստրատուրան: Զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ՝ աշխատանքային գործունեություն է ծավալել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում: 2019-2021 թթ.-ին եղել է «Օրբելի» վերլուծական կենտրոնի փորձագետ: 2022 թ.-ից ՀՊՏՀ հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ է:

173 գիտական և վերլուծական հոդվածների հեղինակ է, 12 գրքի համահեղինակ: Զեկուցումներով հանդես է եկել բազմաթիվ գիտա-ժողովներում:

 ORCID: <https://orcid.org/0000-0002-2177-4887>

# ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԴԱՍԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989\_2022.2-134

**Հիմնաբառեր.** Ռուսաստան, Ուկրաինա, պատերազմ, հեղուկություններ, Արևմուտք

Ուկրաինայում ծավալվող իրադարձությունների հանգուցալուծումը դեռևս վերջնականապես հստակ չէ, բայց արդեն իսկ կարելի է որոշակի հեղուկություններ կատարել: Առաջինն այն է, որ Ռուսաստանը ռազմավարական գերակայություն ունի հեղիսորհրդային տարածքում: Հեղուկաբար՝ նրան հակադրվելը հավասարազոր է ինքնասպանության կամ ինքնախեղման՝ ի դեմս տարածքային կորուստների: Եվ երկրորդ՝ չպետք է չափազանցված ակնկալիքներ ունենալ Արևմուտքից (ՆԱՏՕ, ԵՄ, առանձին գերտերություններ): Ինչպես հերթական անգամ ցույց տվեց Ուկրաինայի օրինակը, նման հույսերը, վաղ թե ուշ, հանգեցնում են հիասթափության:

**2014** թ.-ին սկիզբ առած ռուս-ուկրաինական ճգնաժամը, որն, ընդհանուր առմամբ, Արևմուտք-Ռուսաստան հակասությունների ամենաակնհայտ դրսևորումն է, հարաճուն կերպով խորանալով, անխուսափելի դարձրեց ռազմական բախումը: 2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը սկսեց հատուկ ռազմական գործողություն Ուկրաինայի դեմ<sup>1</sup>, ինչն, ըստ էության, հանգեցրեց ռուս-ուկրաինական պատերազմի: Եթե հաշվի չառնենք նախորդ դարի 90-ականների բալկանյան ճրգնաժամը, որի բարձրակետը եղան 1999 թ.-ին ՆԱՏՕ-ի կողմից Հարավսլավիային հասցված օդային հարվածները, ներկայում Ուկրաինայում տեղի ունեցող ռազմական գործողությունները կարելի է համարել Երկրորդ համաշխարհայինից հետո առաջին պատերազմը Եվրո-

<sup>1</sup> Стів Обращение Президента Российской Федерации, <http://www.kremlin.ru/events/president/news/67843>

պայում:

Ռուսաստանն այս պատերազմում, որն անվանվում է «հատուկ գործողություն», հետապնդում է հետևյալ նպատակները կամ, այլ կերպ ասած, պաշտոնական Մոսկվան ռազմական գործողությունների դադարեցման նախապայման է համարում հետևյալը.

- Կիևի կողմից Ղրիմի միացումը Ռուսաստանին, ինչպես նաև Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունների ճանաչումն այն սահմաններով, որոնք ընդգրկում են Դոնեցկի և Լուգանսկի նախկին մարզերի տարածքը,
- Ուկրաինայի ապառազմականացում, ինչը նշանակում է, որ այդ երկրի տարածքում չպետք է տեղակայվեն այնպիսի ռազմական տեխնոլոգիաներ, որոնք անմիջական սպառնալիք են Ռուսաստանի համար,
- Ուկրաինայի չեզոք կարգավիճակ, ինչը նշանակում է, որ Ուկրաինան չպետք է անդամակցի ՆԱՏՕ-ին,
- Ուկրաինայի ապառազմայնամուլացում, ինչ նշանակում է, որ այնտեղ պետք է հարգվեն բոլոր ազգային ընդհանրությունների, առաջին հերթին՝ ռուսների ազգային, կրոնական, կրթական, մշակութային, լեզվական իրավունքները, այսինքն՝ ռուսները պետք է հնարավորություն ունենան կրթություն ստանալու մայրենի լեզվով, պահպանելու իրենց ավանդույթները, ազատորեն իրականացնելու կրոնական արարողություններ և այլն<sup>2</sup>:

Համաձայն պաշտոնական Մոսկվայի հայտարարությունների՝ հատուկ ռազմական գործողությունն ընթանում է ըստ ծրագրի: Մյուս կողմից, սակայն, պաշտոնական Կիևը չի շտապում հանձնվել:

Ռազմական գործողություններին գրեթե զուգահեռ, սկսվեցին ռուս-ուկրաինական բանակցություններ՝ պատերազմը դադարեցնելու և առկա հակասությունները դիվանագիտական ճանապարհով հար-

թելու համար: Չնայած այդ բանակցությունների բարդ ու դժվարին ընթացքին, այնուամենայնիվ, «թունելի վերջում սկսել է լույս երևալ»: Կողմերը, կարծես, համաձայնության են եկել Ուկրաինայի չեզոք միջազգային կարգավիճակի շուրջ՝ Շվեդիայի կամ Ավստրիայի օրինակով: Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին, վերջնականապես կորցնելով զինված հակամարտությանը ՆԱՏՕ-ի անմիջական ներգրավման հույսը, գնալով հակվում է ընդունելու իր երկրի չեզոք կարգավիճակի վերաբերյալ ռուսական նախապայմանը՝ իհարկե, անվտանգության միջազգային երաշխիքներով: Պաշտոնական հայտարարությունների համաձայն՝ առաջիկայում հնարավոր է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հանդիպումը: Իսկ համաձայնագրի ստորագրումը կարող է տեղի ունենալ մայիսի սկզբին<sup>3</sup>:

\*\*\*

Ռուս-ուկրաինական ճգնաժամից պետք է դասեր քաղեն ոչ միայն ուկրաինացիները, այլև հետխորհրդային մյուս երկրները, այդ թվում՝ Հայաստանը: Ժամանակից առաջ չընկնելով, այնուամենայնիվ, այս պահին իսկ կարելի է անել որոշակի հետևություններ:

Առաջին հետևությունն այն է, որ Ռուսաստանը ռազմավարական գերակայություն ունի հետխորհրդային տարածքում: Բացի ուկրաինական իրադարձություններից, դա ապացուցվեց թե՛ այս տարվա հունվարյան դազախական իրադարձություններով, թե՛ արցախյան 44-օրյա պատերազմով, թե՛ բելառուսական ներքաղաքական ճգնաժամով, որն առաջացավ 2020 թ. օգոստոսյան նախագահական ընտրություններից հետո, թե՛ ԲելառուսԵՄ սահմանին գաղթականների ճգնաժամով (2021 թ.), թե՛ բազմաթիվ այլ իրավիճակներով ու գործընթացներով:

Անկախ նրանից, թե ում է դուր գալիս, ում՝ ոչ, ով է համակրում ՌԴ նախագահ

<sup>2</sup> Պաշտոնական Մոսկվան տարբեր մակարդակներով՝ նախագահի, ԱԳ նախարարի և այլն, բազմիցս խոսել է հատուկ ռազմական գործողության նպատակների մասին: Տե՛ս, օրինակ, Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова телеканалу РБК, Москва, 16 марта 2022 года, [https://mid.ru/ru/foreign\\_policy/news/1804655/](https://mid.ru/ru/foreign_policy/news/1804655/)

<sup>3</sup> Ուկրաինայի տազնապի հարցով նորագոյն զարգացումներ, Նոր Մարմարա, 17.03.2022, <https://www.normarmara.com/arsiv2022-1/170322lu.html>

Վլադիմիր Պուտինին, ով՝ ոչ, Ռուսաստանի գերակայությունը հետխորհրդային տարածքում առարկայական իրողություն է, որի հետ չի կարելի հաշվի չնստել: Արդ, հակադրությունը Ռուսաստանին, նրան ձեռնոց նետելն այս պարագայում հավասարազոր կլինեն ինքնասպանության կամ ինքնախեղման: Ցավոք, մենք՝ հայերս էլ, մեր մաշկի վրա անմիջականորեն զգացինք դա: Արցախյան 44-օրյա պատերազմն իր աղետալի վերջաբանով չի կարելի ասել բացառապես, սակայն էապես նաև հիշյալ առարկայական իրողության ոչ այնքան համարժեք ընկալման և դրանից բխող գործողությունների հետևանքն էր:

Համակրանքն ու հակակրանքը, սիրել-չսիրելը զգացմունքային մակարդակում գտնվող երևույթներ են: Մարդկայնորեն, թերևս, կարելի է հասկանալ նման զգացմունքայնությունը: Սակայն, քաղաքականության մեջ հարկ է լինել գործնապաշտ (պրագմատիկ) և իրատես (ռեալիստ): Իսկ քաղաքական իրապաշտության (ռեալիզմի) բանաձևը բավական մատչելի կերպով տվել է 20-րդ դարի ֆրանսիացի հռչակավոր պետական և ռազմական գործիչ, Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության հիմնադիր Շառլ դը Գոլը. պետք է տեսնել աշխարհն այնպես ինչպես այն կա՝ անկախ նրանից դուր է գալիս դա քեզ թե ոչ, և գործողություններում ելնել բացառապես դրանից<sup>4</sup>:

Երկրորդ կարևոր դասն ուկրաինական ճգնաժամից այն է, որ պետք չէ չափազանցված հույսեր կապել երրորդ կողմի, տվյալ պարագայում՝ Արևմուտքի հետ: ԱՄՆ-ն, ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն, եթե Ուկրաինայի համար չարեցին այն, ինչ ակնկալվում էր, կանեն, արդյոք, դա Հայաստանի համար: Չմոռանանք՝ Ուկրաինան, ի տարբերություն Հայաստանի.

- գտնվում է Եվրոպայում,
- ունի անհամեմատ ավելի մեծ տարածք (603,7 հազ. կմ<sup>2</sup> տարածքով համեմատելի է Թուրքիայի հետ),

- ունի հրաշալի բնակլիմայական պայմաններ,
- երկու՝ Սև և Ազովի ծովերի ափերին է<sup>5</sup> (*Հայաստանը, չունենալով ելք դեպի ծով, համարվում է ցամաքապատ (land-locked) երկիր*):

Բացի համերաշխության ճառերից և դատապարտող հայտարարություններից, Ռուսաստանի դեմ պատերազմող Ուկրաինային Արևմուտքի աջակցությունը դրսևորվում է նաև հետևյալ ձևերով.

- տնտեսական պատժամիջոցներ Ռուսաստանի դեմ,
- որոշակի զենք-զինամթերքի մատակարարում Ուկրաինային՝ ինչպես պատերազմից առաջ այնպես էլ դրա ընթացքում (մասնավորապես՝ տրամադրվել են ամերիկյան արտադրության «Ջավելին» հակատանկային միջոցներ և «Սթինգեր» հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային շարժական համալիրներ),
- ֆինանսական աջակցություն պաշտոնական Կիևին,
- եվրոպական երկրներից կամավորների հավաքագրում և նրանց մասնակցություն ռուս-ուկրաինական պատերազմին և այլն:

Այս ամենը, սակայն, հեռու են այն ակնկալիքներից, որ պաշտոնական Կիևն ուներ Արևմուտքից: Համենայն դեպս, իրականություն չդարձավ «հակապուտինյան կոալիցիա ստեղծելու»՝ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու ակնկալիքը:

Ռուսաստանի նկատմամբ սահմանված տնտեսական պատժամիջոցները, թեև որոշակի հարված հասցրին նրա տնտեսությանը, սակայն լիովին արդյունավետ չեն այս պարագայում: Ավելին, ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան նույնիսկ չմիացավ Ռուսաստանի դեմ Արևմուտքի սահմանած պատժամիջոցներին<sup>6</sup>: Նախապես և պատերազմի ընթացքում մատակարարված զենք-զինամթերքն էլ այն ռազմական տեխ-

<sup>4</sup> Власть факта. Наследие де Голля и современная Франция, Телеканал «Россия-Культура», 18.03.2022 (այս հեռուստահաղորդման տեսագրությունը համացանցում գտնելի չհաջողվեց).

<sup>5</sup> Ուկրաինայի աշխարհագրական դիրքի և բնության մասին տեսն Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 214-216:

<sup>6</sup> Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел России С.В.Лаврова по итогам переговоров с Министром иностранных дел Турецкой Республики М.Чавушоглу, Москва, 16 марта 2022 года, [https://mid.ru/ru/foreign\\_policy/news/1804643/](https://mid.ru/ru/foreign_policy/news/1804643/)

նուլզգիաները չեն, որոնցով Ուկրաինան կկարողանա դիմագրավել ռուսական բանակին: Ինչ վերաբերում է կամավորների հավաքագրմանը և նրանց մասնակցությանը ռուս-ուկրաինական պատերազմին, ապա այս պահին դժվար է ասել, թե ինչպիսին կլինի նրանց ազդեցությունը ռազմական գործողությունների ընթացքի վրա: Այս հարցում էլ, այնուամենայնիվ, մեծ ակնկալիքները տեղին չեն:

Առհասարակ գաղտնիք չէ, որ ռուճացված ակնկալիքները վաղ թե ուշ հանգեցնում են հիասթափության: Ապացույցն Ուկրաինայի ներկայիս իշխանությունների, մասնավորապես՝ նախագահ Զելենսկոյի հիասթափությունն է ՆԱՏՕ-ից և ԵՄ-ից՝ այն առնչությամբ, որ վերջիններս չեն պատրաստվում իրականացնել ուկրաինական այնպիսի ակնկալիքներ, ինչպիսիք են.

- այդ երկրի օդային տարածքի պաշտպանությունը (թռիչքազերծ գոտու ստեղծումը)<sup>7</sup>,
- շուտափույթ անդամակցությունը ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին,
- ավելի տեխնոլոգիական զենքի և զինամթերքի տրամադրումը,
- ՆԱՏՕ-ի զինուժի անմիջական մասնակցությունը մարտական գործողություններին և այլն:

Չնայած արևմտյան երկրների ղեկավարները, ինչպես նաև ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Սթոլթենբերգն ընդունում են, որ ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին Ուկրաինայի շուտափույթ անդամակցությունն այդ երկրի ընտրության ինքնիշխան իրավունքն է, սակայն արձանագրում են, որ Ուկրաինան դեռևս պատրաստ չէ դրան: Ինչ վերաբերում է ավելի տեխնոլոգիական զենքի մատակարարմանը կամ Ուկրաինա արևմտյան օդային և ցամաքային զինուժ ուղարկելուն, ապա արևմտյան երկրների (ԱՄՆ, Գերմանիա) առաջնորդները դա բացառել էին նախքան պատերազմի մեկնարկը: Ներկա պահին, չհաշված հավաքագրված կամավորականներին, արևմտյան զինվորականության ներկայությունն

Ուկրաինայում սահմանափակվում է ռազմական խորհրդատուներով ու հրահանգիչներով: Տրամաբանությունը հետևյալն է. մենք ձեզ կօգնենք կռվել ռուսների դեմ, սակայն ձեր փոխարեն չենք կռվի:

Հին հռոմեական ժամանակներից հայտնի «ուրիշի ձեռքերով կրակից շագանակ հանելու» քաղաքականությունն արդիական է նաև մեր օրերում: Այսօրվա աշխարհաքաղաքական հսկաները շարունակում են հավատարիմ մնալ այդ ռազմավարությանը: Այս տեսանկյունից, արևմտյան տերությունները հետխորհրդային երկրներին գրգռում են Ռուսաստանի դեմ, թշնամացնում նրանց Մոսկվայի հետ, սակայն երբ գալիս է աջակցության կամ միջամտության պահը, չեն ցուցաբերում անհրաժեշտ աջակցությունը, երբեմն էլ՝ ձեռքերը լվանում և մի կողմ են քաշվում:

Եթե ոչ ուկրաինական ներկա ճգնաժամը, ապա 2008 թ. օգոստոսին ռուս-վրացականի վերածված վրաց-օսական պատերազմը, որը պատմության մեջ մտավ «հնգօրյա պատերազմ» անվանումով, ակնհայտ ցույց է տվել հիշյալ պնդումը: Այն ժամանակ էլ Արևմուտքի թողտվությանը կամ գուցե խրախուսմամբ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սահակաշվիլին փորձեց ռազմական ճանապարհով հետ բերել Հարավային Օսիան՝ պատերազմ սանձազերծելով այդ չճանաչված հանրապետության դեմ: Արդյունքում, թիրախում հայտնվեցին նաև այնտեղ տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերը: Իսկ երբ Ռուսաստանը ռազմական ճանապարհով ավելի քան համարժեք արձագանքեց Սահակաշվիլու արկածախնդրությանը, դա ամրապնդելով նաև Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախության ճանաչմամբ, ինչ արեց Արևմուտքը Վրաստանին պաշտպանելու համար...

Հայ ժողովուրդը նույնպես իր ոչ շատ վաղ անցյալի պատմության ընթացքում ունեցել է հիասթափության բազում առիթներ: Հիշենք, օրինակ, 1920 թ.-ը, երբ Հայաստանը ձգտում էր Առաջին աշխար-

<sup>7</sup> Նախագահ Վլադիմիր Պուտինն այդ առնչությամբ հայտարարեց, որ նման քայլը Ռուսաստանում կընկալվի որպես ռազմական միջամտություն ռուս-ուկրաինական հակամարտությանը՝ դրանից բխող հետևանքներով: Встреча с представителями летного состава российских авиакомпаний, <http://www.kremlin.ru/events/president/news/67913>

համարում հաղթած Անտանտի դաշնակից տերությունների օգնությամբ կյանքի կոչել Սևրի պայմանագիրը, սակայն, իրականում, ստացավ Ալեքսանդրապոլի պայմանագիրը<sup>8</sup>: Սեփական պատմությունից դասեր քաղելու անկարողության պարա-

զայում կարելի է գոնե դասեր քաղել ժամանակակից աշխարհում այլ ժողովուրդների քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններից ու գործընթացներից:

<sup>8</sup> Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) ներքին և արտաքին քաղաքականության մասին առկա է հսկայածավալ գրականություն՝ գիտական, հուշագրական և այլ ժանրերի: Թեմայով հետաքրքրվողներին խորհուրդ կտայինք հանրապետության հիմնադիր հայրերի հետևյալ աշխատությունները. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993: Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուֆ, 1968:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Обращение Президента Российской Федерации, <http://www.kremlin.ru/events/president/news/67843>
2. Интервью Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова телеканалу РБК, Москва, 16 марта 2022 года, [https://mid.ru/ru/foreign\\_policy/news/1804655/](https://mid.ru/ru/foreign_policy/news/1804655/)
3. Ուրբախի տազնապի հարցով նորագոյն զարգացումներ, Նոր Մարմարա, 17.03.2022, <https://www.normarmara.com/ar-siv2022-1/170322lu.html>
4. Власть факта. Наследие де Голля и современная Франция, Телеканал «Россия-Культура», 18.03.2022.
5. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986:
6. Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел России С.В. Лаврова по итогам переговоров с Министром иностранных дел Турецкой Республики М.Чавушоглу, Москва, 16 марта 2022 года, [https://mid.ru/ru/foreign\\_policy/news/1804643/](https://mid.ru/ru/foreign_policy/news/1804643/)
7. Встреча с представительницами лётного состава российских авиакомпаний, <http://www.kremlin.ru/events/president/news/67913>
8. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:
9. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուֆ, 1968:

**Ваграм ОВЯН**

*Лектор кафедры общественных наук АГЭУ*

## УРОКИ УКРАИНСКОГО КРИЗИСА

Хотя текущий кризис вокруг Украины пока окончательно не разрешен, тем не менее в данный момент уже можно сделать некоторые выводы. Во-первых: Россия имеет стратегическое преимущество на постсоветском пространстве. Следовательно, противостояние с ней равно самоубийству или самоискалечению в виде территориальных потерь. Во-вторых: нельзя иметь чрезмерные ожидания от Запада (НАТО, ЕС, отдельные державы). Как в очередной раз показал украинский опыт, такие надежды рано или поздно приводят к разочарованию.

**Ключевые слова:** *Россия, Украина, война, выводы, Запад*

**Yahram HOVYAN**

*Lecturer to the Department of Social Sciences, ASUE*

## LESSONS FROM THE UKRAINIAN CRISIS

Though the settlement of current crisis in Ukraine is not still eventually clear, presently certain conclusions can already be made from them. First, Russia has strategic prevalence in the post-Soviet space. Consequently, confrontation with Russia is equal to suicide or self-distortion in the face of territorial losses. The second conclusion is that one must not have exaggerated expectations from the West (NATO, EU, other powers). As the experience of Ukraine has shown once again, such kind of hopes sooner or later entail disappointment.

**Keywords:** *Russia, Ukraine, war, conclusions, West*